Մ. Հ. ՃԵՎԱՀԻՐՃՅԱՆ

ԴՐՎԱԳՆԵՐ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ XIV ԴԱՐԻ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հայ-վրացական բարեկամական հարաբերությունները իրենց դրսևորումն են գտել նաև Կիլիկիայում:

Այս հոդվածում ներկայացվում է երկու դրվագ, որոնք վերաբերվում են XIV դարի Կիլիկիայի Հայկական պետության արքունիքի հետ խնամիական կապեր հաստատած վրաց արքայազուններին և նրանց գործունեությանը[1]: Առաջինը նվիրված է Գեորգի Պայծառափայլ (1299 և 1314-1346 թթ.) թագավորի խնամակալ, Մեծն Գեորգի իշխանի որդու՝ Դավթի ամուսնությանը Կիլիկիայի հայոց Օշին թագավորի քրոջ՝ տամուժել Ալիծի հետ (1311 թ.): Այս ամուսնությամբ իշխանազուն Դավիթն ստացավ Կիլիկիայի Հայկական պետության կարևորագույն ամրություններից Կապան բերդը և նրա շրջակա բնակավայրերը: Բացի այդ, Դավիթը ստացավ նաև կոմսի տիտղոս[2] և կոչվեց «Պարոն Դավիթ գունթ Կապանի»: Այս ամուսինների որդիները և թոռները ժառանգաբար եղան Կիլիկիայի Հայկական պետության վերջին կես դարի մարաջախտները և սպարապետները: Ստորև ցույց է տրվում երկու տների խնամության կապերի աստիճանը:

---

[1] Կիլիկիայի Հայկական պետությանը վերաբերվող արձանագրությունների, արքունի պարգևագրերի, արտոնագրերի, նամակագրությունների և այլ փաստաթղթերի ու արխիվային նյութերի բնագրերի մի մասը մինչև օրս պահվում է Վենետիկի, Տենովայի, Վատիկանի, Տուրինի, Մալթայի, Նեապոլի, Պրովանսի, Սոնպելիեի, Մադրիդի, Բարսելոնայի, Արագոնի և Եվրոպայի այլ վայրերում գտնվող դիվանատներում կամ արխիվներում, ուստի զերծ է մնացել ժամանակի և պատերազմների ավերիչ հետևանքներից: Մինչդեռ Կիլիկիայի Հայկական պետությունից տեղում մնացած արխիվային բոլոր նյութերը որոշակի հանգամանքներում ոչնչացվել են և շատ քիչ բան է հասել մեզ: Նույնիսկ Սսի Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի մատենադարանում անգամ չի մնացել ներկայացվող նյութին վերաբերող որևէ ձեռագիր փաստաթուղթ: Տես՝ V. Langlois. Essai historique et critique sur la constitution sociale et politique de l'Arménie sous les rois de la dynastie Roupenienne, les documents orientaux et occidentaux conservés dans les dépots d'archives de l'Europe. St. Petersbourg, 1860, p. 21-37. Մ. Հ. Ճեվահիրճյան, Այաս նավահանգիստ քաղաքը Կիլիկիայում, «Պատմա-բանասիրական հանդես», 1973, թիվ 1, էջ 100:

[2] Ըստ ազատատիրական կարգի և իշխանության սանդղակի, ամենավերին աստիճանում գտնվում էր թագավորը, նրանից մեկ աստիճան ներքև՝ կոմսը: Վերջինս աստիճանով թագավորին ամենամոտ մեծ իշխանն էր:


Հեթում Ա.
Թագավոր Հայոց.
1226-1270 թթ.
Մեծն Գեորգի.
Իշխան,
խնամակալ
վրաց
թագավորի և
պետության
1307/8-1314 թթ.
Լևոն Գ.
Թագավոր Հայոց.
1270-1289 թթ.
Ալինախ.
Պարոն, տեր
Լամբրոնի,
Տարսոնի, Մոլևոնի
և Գուգլակի.
օ 1283 թ.
+ 1317 թ. Տարսոն
Օշին.
Թագավոր Հայոց.
1307-1320 թթ.
օ 1283 թ.
Ալիծ.
Տամուժել.
օ 1298 թ.
+1316 թ.
թաղ. Տարսոն
∞ 1311 թ.
Դավիթ.
Պարոն, կոմս
Կիլիկիո Կապան
բերդի.
Տարսոնում
Թորոս Կապանցի
Սվագ մարաջախտ,
Սպարապետ՝ 1337 թ-ից
Սվագ պարոն. կոմս
օ ~ 1312-1316 թթ.
Օշին.
Խարաջախտ.
օ~1312-1316 թթ.
Վասիլ.
Պարոն, ավագ.
մարաջախտ, կոմս.
օ Սիս.
+ 1404 թ-ից հետո
Երուսաղեմ:.
Լիպարիտ.
Պարոն, մարաջախտ,
Սպարապետ.
∞ Մանանա կամ Սննա
Իշխանուհի.
+ 1369 թ. Սիս.
օ Կապանի Սասնո գյուղ:
Լիկոս,
Պարոն.
Վասիլ.
Հովհաննես
+ Վրաստան:

Այս ամուսնության մասին հետաքրքիր տեղեկություններ է պարունակում Կիլիկիայի Հայկական պետության ավագ պարոն Թորոսի որդի Վասիլ ավագ մարաջախտի 1370-ական թվականներից գրել սկսված ժամանակագրությունը.

«Ի սոյն ամի [ՉՕԷ=1308] գնաց Օշին թագաւորն ի Թավրէժու ղանն վասն երկրիս կարե[ա]ց որ և ար[ար] խնամութիւն ընդ Գորգէն թագաւոր վրաց ու այրին պոմն Թուխք[3] առաջի Ղանին, զԴաւիթ որդի վրաց թագաւորին ի հետ տամուժել Ալիժին փոքր քօրն Օշին թագաւորին, ու եբեր զԴաւիթն ի հետն ու ի թուին ՉԿ [1311]-ն արար հարսանիք ի Զ [6] յունուարն ի Տարսուս, ու երեսի սիգղով[4] զԿապանն իր երկրովն, ու հաստատեց զպարոն Դաւիթն գունթ Կապնուն երկրին ... թագաւորէն տէր էվանէ արհիեպիսկոպոսն Սիւնեաց և պարոն Շահնշահ Աւաքն մարաջախտն վրաց, և այրին պոման, որ Հայոց սահմանով կենայ և ոչ [մ]ի բան ֆռանգութեան չինի յիր ա[մէ]ն կենդանութեանն»[5]:

Ժամանակագրությունում հիշատակվող 1308 թ. «Թավրէժու ղան»-ի պետության սահմանները պարփակում էին Պարսկաստանը, Միջագետքը, Փոքր Ասիան, Կովկասի հարավի և Կասպից ծովի արևելյան կողմի երկրները: Այդ պետությունը կոչվում էր Մոնղոլների էլխանություն, որի մայրաքաղաքը Թավրիզն էր: 1308 թ. մոնղոլների էլխանն էր Օլջեյթուն (1304-1316 թթ.). նա հայտնի էր նաև Խարբանդա խան անունով[6]: Թավրիզի մոնղոլ խաները խնամիական կապեր էին հաստատել վրաց արքունիքի հետ: Դեմետրե II Անձնուրաց թագավորի երեք կանանցից մեկը մոնղոլ արքունի ընտանիքից էր: Օլջեյթու էլխանի հորաքրոջ առաջին ամուսինը եղել էր վրաց Վախթանգ II (1289-1292 թթ.) թագավորը: Իսկ նրա երկրորդ ամուսինն էր Դավիթ VIII (1293-1311 թթ.) թագավորը: Վերջինս Գեորգի V Պայծառապայլի եղբայրն էր: Օլջեյթու էլխանը օգնել էր Գեորգի V-ին, որպեսզի նա Վրաստանի բոլոր փոքր թագավորությունները միացնի իր տիրապետության տակ[7]:

Մոնղոլ էլխանները խնամիական կապեր էին հաստատել նաև Կիլիկիայի հայ թագավորների հետ: Հեթում I թագավորի եղբայր Սմբատ սպարապետի երկրորդ կինը՝ Բիատախավոր խաթունը, սերում էր մոնղոլ էլխանների արքունիքից: Նույնը կարելի է ասել նաև Սմբատ I (1297-1298 թթ.) և Թորոս (1293-1294 թթ.) թագավորների մասին: Կիլիկիայի Հայկական պետությունը դեռ Հեթում I թագավորի ժամանակից զինակցության դաշնագիր էր կնքել (1254 թ.) Մեծ Մոնղոլ կայսրության հետ: Մոնղոլ տիրակալները, իրենց զինակիցների հավատարմությունը և գործակցությունը ամրապնդելու

---

3 «Արեցին պայմանի թուղթ», այսինքն՝ ստորագրեցին «պայմանագիր»:

4 «երեսի սիգղով». տվեց սիգղով (sigillum, σιγίλλον) կնքած պարգևագրով:

5 Վասիլ մարաջախտի ժամանակագրություն, հավաքեց՝ Արտ. Ս. Մաթևոսյան, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, թիվ 4, էջ 198: British Museum, Catalogue Or. 5458: Մաշտոցի անվան Մատենադարանում (այսուհետև՝ ՄՄ) պահվող միկրոֆիլմ, թուղթ 99բ-100ա:

6 Վ. Ս. Հակոբյան. Մանր ժամանակագրություններ.հ. Ա, Երևան, 1951, էջ 391:

7 Գեորգի V Պայծառապայլ Բագրատունիանին 1327 թ. Վրաց թագավորությանը միացրեց Իմերեթի իշխանությունը, իսկ 1334 թ.՝ Սամցխե-Սաաթաբագո իշխանությունը:

նպատակով, խնամիական կապերը խաչաձևում էին հայ, վրաց, սելջուկ և մոնղոլ արքունի ընտանիքների անդամներին իրար հետ ամուսնացնելով:

Ավագ մարաջախտ Վասիլի ժամանակագրությունում նշված վերոհիշյալ «Գորգեն թագաւոր վրաց»-ը պետք է լինի անչափահաս Գեորգի V Պայծառափայլ թագավորի խնամակալ իշխան Մեծն Գեորգին: Մոնղոլների էլխանը անչափահաս Գեորգի V-ին թագավոր ճանաչելու առթիվ, Մեծն Գեորգիին նշանակել էր «վերակացու և գործերը վարող» իշխան, այսինքն՝ Վրաց թագավորի և պետության խնամակալ: Անչափահաս Գեորգի V Պայծառափայլը մինչ չափահաս դառնալը, պետության լոկ անվանական թագավորն էր: Գործնականում երկրի ղեկավարը Մեծն Գեորգի իշխանն էր: Այդ մասին հետևյալն է գրել վրաց Անանուն ժամանակագիրը. «Խանը դեսպան ուղարկեց Դավթի[8] մոտ և պահանջեց, որպեսզի որդուն[9] թագավոր դարձնի: Այն ժամանակ Գեորգին փոքր էր, նրան էլ տվին և ուղարկեցին Հորդա. խանը թագավորություն [շնորհեց] և տվեց Տփղիսը, իսկ վերակացու և գործերը վարող նշանակեց Մեծն Գեորգիին: Եվ եկան Տփղիս: Այս տարին վախճանվեց Սամցխեի իշխան Բեքան...»[10]:

Ըստ նույն Անանուն ժամանակագրի տված տեղեկության, Սամցխեի իշխան և Գեորգի V-ի պապ Բեքան մահացել է Դավիթ VIII-ից (1311 թ.) երեք տարի շուտ, այսինքն՝ 1308 թ.: Այդ մասին գրել է հետևյալը. «Սամցխեին տիրացան նրա երեք որդիները. անդրանիկը՝ Սարգիս, միջնեկը՝ Ղվարղվարե, կրտսերը՝ Շալվա:

Երրորդ տարին վախճանվեց Դավիթ VIII թագավորը՝ դառն ցավերից սպառված: Թաղեցին Սցխեթի թագավորական հանգստարանում, նրա փոխարեն թողին որդուն՝ կրտսեր Գեորգիին, որին թագավոր էին դարձրել երկու տարեկանից»[11]:

Օլջեյթու էլխանի Մեծն Գեորգիին «վերակացու և գործերը վարող նշանակելու» և Գեորգի V Պայծառափայլին Տփղիսում Արևելյան Վրաստանի թագավոր կարգելու[12] իրադարձությունը հանդիպում է նույն՝ 1308 թ.: Դեռևս 1299 թ. մոնղոլները Գեորգի V Պայծառափայլին հռչակում էին թագավոր[13]: Հայ և վրաց իշխանների մասնակցությամբ մոնղոլների դեմ 1295/6 թ. Դավիթ

---

[8] Դավիթ VIII (1293-1311 թթ.) թագավոր Քարթլիի. եղբայր Վախթանգ III-ի և Գեորգի V Պայծառափայլի:

[9] Մոնղոլ Օլջեյթու էլխանը անչափահաս Գեորգի V-ին համարում էր իր «որդին» և հովանավորում նրան:

[10] Վրաց ժամանակագրություն (1207-1318 թթ.), աշխատ.՝ Պարույր Մուրադյանի, Երևան, 1971, էջ 186:

[11] Նույն տեղում, էջ 187: Գեորգի VI Կրտսեր (1311-1313 թթ.), մահացել է թուրքերի դեմ պատերազմելիս:

[12] Նույն տեղում: XIII դարի վերջերին և XIV դարի սկզբներին, մոնղոլ գերիշխանության ներքո, Վրաց թագը անցել էր երեխա թագավորի ձեռքը: Այդ պատճառով Վրաց պետությունում ստեղծվել էր թագավորների անկայուն դրություն:

[13] Սակայն դա ձևական բնույթ ուներ, քանի դեռ ողջ էին նրա թագավոր եղբայրները՝ Դավիթ VIII-ը, Վախթանգ III-ը և Դավիթ III- ի որդին՝ Գեորգի IV Կրտսերը:

VIII-ի ապստամբելու փորձից հետո վերջիններս այլևս նրան չէին վստահում որպես բարեկամի և դաշնակից թագավորի: Նա քաշվել էր Գվելեթի ամրությունը և բարեկամական հարաբերությունների մեջ մտել Ղազան խանի թշնամիների հետ:

1308 թ. մինչև 1310 թ. Վրաստանը գահակալ թագավոր չուներ[14]: Պետական գործերը վարում էր թագավորի լիազորությամբ Մեծն Գեորգին: Այդ պատճառով է, որ Կիլիկիայի Հայկական պետության ավագ մարաջախտ Վասիլի ժամանակագրությունում 1308 թ. դեպքերի կապակցությամբ, Մեծն Գեորգին անվանվել է «Գորգէն թագաւոր Վրաց»: Այս վերջինս չէր կարող լինել Գեորգի V Պայծառափայլը: Որովհետև «Գեորգի թագավորի» որդի Դավիթը 1311 թ. պիտի ունենար տամուժել Ալիծին համապատասխանող տարիք: Տամուժել Ալիծը ամուսնանալիս 23 տարեկան էր, ուրեմն նրա փեսացու Դավիթը ևս պետք է ունենար 23-ից ոչ պակաս տարիք: Իսկ Գեորգի V Պայծառափայլը նույնիսկ չէր հասած արքունքի:

Միջնադարյան գրավոր աղբյուրներում ստվերի մեջ է մնացել Գեորգի V Պայծառափայլի և նրա խնամակալ Մեծն Գեորգիի 1308-1314 թթ. գործունեությունը: Ավագ մարաջախտ Վասիլի սույն տեղեկությունը որոշ չափով պարզաբանում է «թագավոր Վրաց» անվանված խնամակալ Մեծն Գեորգիի ով լինելը: 1308 թ. Թավրիզում պայմանագիր կնքող «թագավոր Վրացը» եղել էր հենց Մեծն Գեորգին:

Նման երևույթ նկատվում է նաև Կիլիկիայի Հայկական պետությունում, Հեթում II-ի ժամանակ: Վերջինս դեռ թագավոր չէր օծված, սակայն որպես թագավոր ղեկավարում էր պետությունը: Թեև Թորոս (1293-1294 թթ.) թագավորի մանկահասակ որդին՝ Լևոն III-ը (1301-1307թթ.), թագավոր էր օծվել, բայց պետության և թագավորի խնամակալը հանդիսանում էր «պարոն» Հեթում II-ը և կոչվում էր նաև «թագավոր»: Ուստի՝ զարմանալի չպետք է թվա, երբ XIII դարի վերջում և XIV-ի սկզբի ժամանակաշրջանում թագավորի լիազորությամբ գործող պետության և թագավորի խնամակալները Կիլիկիայի հայերի կողմից անվանվել են «թագավոր»: Այդ է պատճառը, որ ավագ մարաջախտ Վասիլ իշխանը վրաց խնամակալ իշխանին անվանել է «թագավոր»:

Ավագ մարաջախտ Վասիլի ժամանակագրությունում նշված «պարոն Շահնշահ Աւաքն մարաջախտն Վրաց»-ը Անանուն ժամանակագրի մոտ կոչվել է Շանշե երկայնաբազուկ[15] և նրա մասին գրված է հետևյալը. «Այս Օլջաթ

---

14 Հիշյալ ժամանակաշրջանի Վրաց թագավորների գահակալության թվականները ճշտելու նպատակով դիմեցինք վրացագետ-պատմաբան Պարույր Մուրադյանին, նրան մեր շնորհակալությունն ենք հայտնում արդի վրացերեն գրականությունում առկա թվականները բաղդատելու համար:

15 Իվանե II Երկայնաբազուկի որդի Շահնշահ II-ը ճանաչվում էր նաև «Շահնշահն 'ի Հայոց և Վրաց» կոչումով: Նա մահացել է 1320 թ.: 1300 թ. մասնակցել է դեպի եգիպտոս Ղազան խանի կատարած մեծ արշավին: Ղազան խանի զինակից Հեթում II թագավորը ևս մասնակցել էր նույն արշավանքին և հետապնդելով մամլուկ սուլթան Մուհամմեդ իբն Քալաուն էլ Նասրին, հասել էր մինչև եգիպտոսի արդի Իսմայիլիյե քաղաքի մոտակա Ուադի-Տաուլա վայրը: Երկայնաբազուկ (Մխարգրձելի) Ջաքարյանների մեծ իշխանական տան անդամները Վրաց արքունիքում ժառան-

սուլթանը, փոքրիկ Գեորգիին (V Պայծառափայլ) թագավոր ուղարկեց և Իտրասանցի ոմն Ջաալ Մելիք պարսիկի ու Չոփանի հորեղբայր Ախրունչիին էլ հետն ուղարկեց, որպեսզի ամբողջ Վրաստանը ի մի ժողովեն Գեորգիի թագավորության ներքո: Եվ նրանք (արքունական ավագանին) նշանակեցին Շանշե Երկայնաբազուկին և Ավագի դուստր Խվաշագից ծնված Զաքարիային»[16]:

Մի կողմից Վրաստանի միացյալ թագավորության դիրքի ամրապնդման, իսկ մյուս կողմից էլ Կիլիկիայի Հայոց պետության վրա Եգիպտոսի մամլուկների գործադրած ճնշման պատճառով, հայոց և վրաց միջև ռազմաքաղաքական ասպարեզում մերձեցում էր ստեղծվել: Մարաջախտ Վասիլի ժամանակագրությունից պարզվում է, որ Օշին թագավորի և խնամակալ Մեծն Գեորգիի միջև խնամիական հարաբերությունների պաշտոնական հաստատումը տեղի է ունեցել 1308 թ. Թավրիզում: Օլջեյթու էլխանի ներկայությամբ պայմանագիր է ստորագրվել Օշին թագավորի փոքր քրոջը՝ տամուժել Ալիծին իշխանազուն Դավթի հետ ամուսնացնելու մասին: Դավթին՝ իբրև օժիտ և տիրույթ, տրվում էր «զԿապանն իր երկրովն, ու... գունք Կապնուն երկրին»[17] տիտղոսը:

Ժամանակագրությունը պարունակում է նաև այլ բնույթի տեղեկություններ: Դավթի և Ալիծի ամուսնության հարցը այնքան էլ հասարակ կերպով չի լուծվել դավանական տարբերությունների պատճառով: Առանձին պայմանագիր էր կնքվել՝ մի կողմից «տէր էվանէ արհիեպիսկոպոսն Սիւնեաց և պարոն Շահնշահ Ակաքն մարաջախտ վրաց» և մյուս կողմից՝ փեսացու Դավթի միջև, որպեսզի նա ամուսնությունից հետո «Հայոց սահմանով կենայ և ոչ [մ]ի բան ֆռանգութեան չինի յիր ա[մ]ն կենդանութեանն»: Արանով էլ նա Կիլիկիայում ցմահ պետք է պահպաներ Հայ եկեղեցու դավանությունը և չլիներ կաթոլիկ կամ լատինամոլ կուսակցության կողմնակից: Դա էր Սյունիքի Հովհաննես Ժ Օրբելյան (1304-1324 թթ.) արքեպիսկոպոսի[18] և Վրաց ավագ մարաջախտ Շահնշահ II ամիրսպասալարի պահանջը Դավթից:

Դքսուհի Ալիծը 1316 թ. 28 տարեկան հասակում մահանում ու թաղվում է Տարսոնում, իր Ալինախ եղբոր տիրույթում[19]: Մեկ տարի անց, 1317 թ.,

---

գաբար ստանձնել էին ամիրսպասալարի (սպարապետի) և պետական այլ բարձր պաշտոններ: Միջնադարյան վրաց գրավոր աղբյուրներից «Կարգադրումն արքունի դրան» պատմահրավաքանական վավերագրում նշված է Վրաց արքային ենթակա 12 մեծ իշխանների (թարգմանված է «ազգաս») նստելու տեղը արքունի դիվանատնում: Հայոց մեծ իշխանը նստում էր 9-րդ բազմոցի վրա:

Հ. Սճառյան. Հայոց անձնանունների բառարան, հ.Դ, էջ 111: Լ. Մելքիսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Երևան, 1936, էջ 71-72:

16 Վրաց ժամանակագրություն, էջ 187:

17 Կապանի կոմսություն:

18 Հովհաննես Ժ Օրբելյան արքեպիսկոպոսը հաջորդել է պատմագիր Ստեփաննոս Օրբելյանին (+ 1304 թ.): Նրա մասին տե՛ս Հ. Սճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, 1946, էջ 609-610:

19 Օշին թագավորի հետ երկվորյակ ծնված պարոն Ալինախ իշխանի տիրույթների մեջ էին գտնվում Լամբրոնի, Կուկլակի, Մոլևոնի բերդերը և Տարսոն բերդաքաղաքը՝ իրենց շրջակա վայրերով:

Տարսոնի գետում ծիու հարվածից մահանում է նաև արքեպիսկոպոս Ալինախը և թաղվում Տարսոնում: Հեթում II, Սմբատ I, Կոստանդին II, և Օշին թագավորների քույր, Կապանի կոմսուհի տամուժել Ալիծի տապանաքարը գտնվում էր (1861 թ.) Տարսոնի Ս. Աստվածածին եկեղեցու դռան վրա[20]: Տապանաքարի վրա քանդակված է եղել ծաղկազարդ մի խաչ և Կապանի կոմսության զինանշանը: Դա ձևավորված է եղել դաշտի վերևի ձախ անկյունից դեպի ներքևի աջ անկյունը իջնող մի երիզով (Bande, Перевязь справа): Տապանաքարը ունեցել է 1,44 մ X 0,48 մ մակերես: XX դարի սկզբին տապանաքարը տեսած Աղան եպս. Համամճյանն իր նոթերի մեջ գրել է հետևյալը. «Տարսոնի Ս. Աստվածածին տաճարի պարսպին հյուսիսային կողմը, գրեթե կից պարիսպին, կա մի ցածկեկ գերեզման, որուն տապանաքարին վրա չորս կողմը գրված է հետևյալը (թեև այդ քարը ի վերջո Գրիգոր անուն վարդապետի համար գործածված է իբրև տապանագիր և անոր անունն ալ վրան փորագրված է մեջտեղը).

Որ վասն անչափ սիրոյ քոյին
Բանդ ի Կուսէն առեր մարմին,
Աղաչանաք Աստուածածնին,
Թո՛ղ ըզյանցանսըն զԱլիծին.
Յոր եւ յանգեաւ ի մեծ թվին
ՉԿԵ-ին
Յորժամ գայցես յաշխարհ կրկին
Յարոյ զսա փառաւք քոյին. Ամէն»[21]:

Տապանաքարը պատրաստված է եղել քառանկյունի սպիտակ և ընտիր մարմարից: Վերոհիշյալ արձանագրությունը եղել է ցածրադիր գերեզմանաքարի եզրերով անցնող շրջագծում, բոլորգրով[22]: 1861-1903 թթ. միջև այդ գեղեցիկ և պատմական նշանակություն ներկայացնող տապանաքարը,

---

20 V. Langlois, Voyage dans la Cilicie et dans les montagnes du Taurus, Paris, 1861, p. 321. Ղ. Ալիշան, Վենետիկ, 1885, էջ 272:

21 Բաբգեն Ա Սթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո, Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիո, Անթիլիաս, 1939, էջ 186-187: Ղ. Ալիշան, Սիսուան: V. Langlois, Rapport sur l'exploration archeologique de la Cilicie et de la Petite-Armenie, 1852-1853, Paris, 1854, էջ 35: Վ. Լանգլուան սխալմամբ Ալիծը ընթերցել է Ալիքս և գրել «Alexis» ձևով: Աս. Շ. Մնացականյան, Գեղագրուհի Ալիծ Տարսոնացի, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1975, թիվ 10, էջ 98: Ն. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբյանց, հ. Ջ, Երուսաղեմ, 1972, էջ 119: Սա գտնվում է 1798 թ. հետո ընդօրինակված ձեռագիր «Ժողովածուում»: Աղան եպիսկոպոս Համամճյանը ազգանվեր գործ է արել արձանագրություններ, հիշատակարաններ և հնություններ նկարագրելով: Նա 1903 թ. հոկտեմբերին գրել է. «Ամբողջովին տասներկու ձեռագիրներ Պեհեսնիու եկեղեցուն սեփական ցուցակագրեցի և հիշատակարաններն ընդօրինակեցի: Ամբողջովին Ս. Փրկիչ եկեղեցվոյն դարակին մեջ գետեղել տվի»: (Համազասպ Ոսկյան, Ցուցակ ձեռագրաց ի Հանդես Ամսօրեա, Վիեննա, 1976, էջ 97բ):

22 Բաբգեն Ա, նշվ. աշխ., էջ 186: Աս. Շ. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 98:

Տարսոնի Ս. Աստվածածին եկեղեցու դռան վրայից հանվելով, օգտագործվել է երկրորդ մի անձնավորության, մի Գրիգոր վարդապետի համար որպես գերեզմանաքար: Դա հավանաբար պիտի լիներ Տարսոնի վարդապետներից մեկը: Արքայական տապանաքարը եկեղեցու դռան վրա ագուցողները նպատակ են ունեցել այն փրկել կորստից և պահպանել ապագա սերունդների համար, իբր փառավոր անցյալից մի հիշատակ: Սակայն՝ հետագայում, տգիտության պատճառով, մոռացվել էր Ալիծի ով լինելը, և գերեզմանաքար պատրաստելու համար եղծվել է հուշարձանը: Տարսոնի Ս. Աստվածածին եկեղեցին մինչև 1922 թ. գործում էր և ներկայացնում մի տեսակ թանգարան, ուր պահվում էին Կիլիկիայի Հայկական պետության ժամանակից մնացած և հնագիտական արժեք ներկայացնող վիմագիր հայերեն արձանագրություններ: Դրանց թվին էր պատկանում Տարսոն բերդաքաղաքի արևմտյան կողմի Կանճըկ-կափը կոչվող դռան վրայի 1228 թ. Հեթում I թագավորի վերանորոգության արձանագրության քարը[23]: Այնտեղ էր գտնվում նաև 1319 թ. Լամբրոնի մոտակա, այժմ Սինապկալե կոչվող բերդի դռան վիմագիր արձանագրությունը[24], 1270 թ. մահացած ոմն ազնվական Ստեփաննոսի խաչարձանը[25] և այլ արձանագրություններ: Տարսոնի Ս. Աստվածածին եկեղեցին 1922 թ. Կիլիկիայի հայոց բռնագաղթից հետո գրավվել է տեղի թուրք իշխանությունների կողմից և վերածվել աղջկանց վարժարանի, իսկ 1927 թ. վարժարանը փակվել է և քանդվել մինչև հիմքերը: Հայոց եկեղեցու և նրա մեջ գտնվող հայ ժողովրդի հոգևոր արժեքների հետքը կորստի մատնելու նպատակով, քարերի մի մասը գործածվել է շինությունների համար, իսկ մյուս մասը թաղվել նույն տեղում:

Տարսոնի Ս. Աստվածածին եկեղեցին գտնվում էր արդի Թարսուս գյուղաքաղաքի Ուլու-ճամի (միջնադարի հայոց Ս. Սոփի Մայր տաճարը) մզկիթին կից և նրա ճիշտ արևելյան կողմի ծայրին: 1957 թ. եկեղեցու տեղում կար բացօթյա մի ավտոտնակի հրապարակ: Ահա այսպես կորստի մատնվեց արքայադուստր Ալիծի դարավոր տապանաքարը:

XIII-XIV դդ. Տարսոն բերդաքաղաքը Լևոն III-ի, Հեթում II-ի, Օշինի, Ալիծի, Ալինախի և բազմաթիվ այլ թագավորների ու իշխանավորների համար սրտամոտ մի բնակավայր էր: Այնտեղ էին օծվում, ամուսնանում, մահանում և թաղվում:

Մինչև օրս էլ պարզված չէ տամուժել Ալիծի մոր ինքնությունը: Լևոն III թագավորի կինը՝ Կեռան թագուհին, մահացել է 1285 թ. օգոստոսի 9-ին, մենաստանում, և թաղվել Դրազարկի վանքում: Նրա մահից երեք տարի անց, 1288-ին, ծնվել է Օշինի փոքր քույր Ալիծը: Ուստի Օշին թագավորը և տամուժել Ալիծը զավակներ են եղել նույն թագավոր հորից և տարբեր մայրերից: Հայ

---

23 V. Langlois. Rapport..., p. 34. Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 270: Արշակունի Թեոդիկ, Ամիս մը ի Կիլիկիա, Կ. Պոլիս, 1910, էջ 199, 202: Մատենադարան «Արաքսի», Կիլիկիա, Պետերբուրգ, 1894, էջ 211:

24 V. Langlois. Rapport..., p. 36. Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 273: Ս. Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 199, 202:

25 V. Langlois. Rapport..., p. 35. Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 271:

մատենագրությունը Ալիծի մոր ինքնության մասին պահպանում է խոր լռություն: Ըստ երևույթին պատշաճ չի համարվել այդ մասին հիշատակելը: Ալիծի ծնունդից մեկ տարի հետո մահացել է Լևոն III թագավորը: Կարելի է ենթադրել, որ Լևոն III-ի երկրորդ կինը եղել է հարճ կամ ծագումով ոչ քրիստոնյա, և միջին դարերում դա համարվում էր ոչ օրինական միություն: Դրա համար էլ գրավոր աղբյուրներում Ալիծի մասին, իբր արքայադստեր, տեղեկություններ չկան: Սակայն բանասեր Աս. Շ. Մնացականյանի և մեր պրպտումները զուգադիպեցին իրար և հանգեցրին այն համոզման, որ Տարսոնում գտնված վերոհիշյալ տապանաքարը իսկապես պատկանել էր արքայադուստր Ալիծին: Աս. Շ. Մնացականյանը բարյացակամորեն ինձ տրամադրեց 1608-1658 թթ. Ղրիմի Կաֆա քաղաքում արտագրված և այժմ Մաշտոցի անվան Մատենադարանում գտնվող թիվ 7709 ձեռագիր ժողովածուում (թերթ 161բ) հայտնաբերած ոտանավորի պատճենը, որը նույնական էր Տարսոնում թաղված արքայադուստր Ալիծի տապանաքարի արձանագրության հետ: Ոտանավորի և Ալիծի տապանաքարի արձանագրության բնագրերը գրված են միևնույն հեղինակի կողմից, այսինքն դա «Ոտանաւորք Լէոն թագաւորին դստերն զԱլիցին» ոտանավորի հեղինակի ստեղծագործությունն է:

Ոտանավորում գոյություն ունի մի քառյակ ևս, որը նախորդել է տապանաքարի բնագրին.

Ողջոյն սիրոյ առ ձեզ հասցէ
Ի հեռուստ այսմ աշխարհէ.
Սկըսիմ խաւսել զոր միտս բաւէ,
Զքեզ գովել փոքր ի շատէ[26]:

Տապանաքարի և ոտանավորի բնագրերի նույնությունը անառարկելի ապացույց է դրանց՝ Ալիծին պատկանելու մասին: Մեզ հասած գործերից դատելով, շնորհաշատ արքայադուստր է եղել Ալիծը, նա գրել է ոտանավորներ (ոտանավորք): Աս. Շ. Մնացականյանի հետ եկանք այն եզրակացության, որ XIV դարում Տարսոնում գեղագրությամբ զբաղվող «գրագիր յոյժ հմուտ» Ալիծը ևս նույն արքայադուստրն էր, որը գրել է.

Օայրըն Ձա-յին, ծակըն Օա-յին՝
Չի՛ նըմանիր գիրն Ալիծին.
.....
.....
Զծայրըն Ձա-յին, զծակըն Օա-յին,
Նա կու լինի փեսայ Ալիծին.
.....
.....

---

26 ՄՄ, ձեռ. թիվ 7709, էջ 161բ: Աս. Շ. Մնացականյան, Նշվ. աշխ., էջ 97: Տե՛ս նաև ՄՄ, ձեռագիր ժողովածու, թիվ 3206, էջ 157ա:

Ծայրըն Ձա-յին, ծակըն Օա-յին՝
Կու նըմանի գիրն Ալիծին[27].

Գեղագիր Ալիծի և արքայադստեր լեզուն և տաղաչափությունը համապատասխանում են իրար: Կարելի է համաձայնել այն մտքի հետ, որ նույն թիվ 7709 ձեռագիր ժողովածուի (էջ 93բ-94ա) «Աւա՛ղ, զԼեոնն ասեմ» ժողովրդական երգը ևս Ալիծի ստեղծագործություններից է:

1308 թ. Թավրիզում տամուժել Ալիծի և իշխանազուն Դավթի ամուսնության պայմանագիրը ստորագրվելուց հետո, Դավիթը երեք տարի հյուրընկալվում է Սսի պալատում: Մինչև հարսանիքը (1311 թ.) նա ծանոթանում է հայոց սովորություններին, դավանանքին, կարգ ու կանոնին և այն ամեն ինչին, որը պարտավորվել էր հարգել Սյունյաց եպիսկոպոսի, Հայոց և Վրաց Շահնշահ II ամիրսպասալարի առաջ: Ըստ երևույթին՝ Դավիթը սովորել է նաև հայերեն գրել: Դա է հուշում Ալիծի ոտանավորը: Ալիծը պայման էր դրել՝ իր ձեռքը խնդրող փեսացուները պարտադիր կերպով գեղագիր պետք է լինեին: Ոտանավորի վերջին մասից պարզվում է, որ Ալիծը ամուսնության հավանություն է տվել թեկնածուներից մեկին, որի

Օայրն Ձա-յին, Օակըն Օա-յին՝
Կու նըմանի գիրն Ալիծին:

Դա եղել էր Դավիթը:

Շարունակելի

---

27 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 520: Տե՛ս նաև՝ Վ. Հացունի, Հայուհին պատմության առջև, Վենետիկ, 1936, էջ 353: Ն. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբյանց, հ. Զ, էջ 119: